

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3114 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի «Տեխնիկ» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝

- 1) առկա
- 2) հեռակա
- 3) հեռավար (դիստանցիոն)
- 4) դրսեկություն (էքստենսատ):

3. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) կրթության առկա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի
 - բ. հիմնական կրթության հիմքով՝ 3 տարի
- 2) կրթության հեռակա ձևով.
 - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3
- 3) դրսեկության (էքստենսատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով.

կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենսատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 2844 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4752

Ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3114 «ԳՅՈՒԼԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

- 1) Տեխնիկ՝ գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ նորոգող,
 - 2) Տեխնիկ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկող,
 - 3) Տեխնիկ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման:
7. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտությամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.
- 1) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործումը կազմակերպելը,
 - 2) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների անսարքությունների բացահայտման, և դրանց տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներ կազմակերպելը,
 - 3) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների լաբորատոր և շահագործական փորձարկումներին մասնակցելը,
 - 4) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկատնտեսական արդյունավետության հիմնավորմանը մասնակցելը,
 - 5) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման ընթացքում տարբեր բնույթի փաստաթղթերի մշակմանը, դրանց պահպանմանը և փոխանցմանը մասնակցելը,
 - 6) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման ժամանակ անհրաժեշտ պարզագույն հաշվարկներ կատարելը, գծագրեր, սխեմաներ մշակելը,
 - 7) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման և նորոգման վերաբերյալ վիճակագրական տվյալներ հավաքագրելը,
 - 8) գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների արտադրական գործընթացների ազրոտեխնիկական պահանջների ապահովումն իրականացնելը:

ԳԼՈՒԽ 3.

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3114 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՏՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

8. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

- 1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,
- 2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,
- 3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,
- 4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,
- 5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,
- 6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,
- 7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,
- 8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,
- 9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,
- 10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

3114 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

- 1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
- 2) տիրապետի հայոց լեզվին,
- 3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,
- 4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,
- 5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,
- 6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
- 7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:
- 8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,
- 9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի սույն հրամանով հաստատված սույն հրամանով հաստատված աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի սույն հրամանով հաստատված սույն հրամանով հաստատված աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3114 «ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՁՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. աշխատանքի պաշտպանության և էկոլոգիայի,

բ. գծագրության,

գ. էկոնոմիկայի,

դ. ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական առարկաների,

2) ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. էլեկտրատեխնիկայի,

բ. համակարգչային տեխնիկայի,

գ. գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման,

դ. գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման.

3) արհեստանոցներ.

ա. գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման և տեխնիկական սպասարկման.

4) մարզական համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլանով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումների հավաստումը ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության «տեխնիկ» որակավորմամբ մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3114 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՈՂՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով սույն հրամանով հաստատված 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշիչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

- 1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,
- 2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,
- 5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,
- 6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,
- 7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Հաստատված է

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2012թ. մարտի 22-ի N 204-Ն հրամանով

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»		
1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-11-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
3.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
7.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
8.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
9.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,

		<p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
10.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
11.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</p> <p>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</p> <p>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</p> <p>5) արում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p> <p>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</p> <p>7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
12.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
13.	Կատարման չափանիշներ	<p>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստատիրոջ,</p> <p>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p> <p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) արողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
14.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
15.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու</p>

		<p>համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
16.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-11-001
17.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
18.		36 ժամ
19.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
20.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
21.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
22.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
23.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
24.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:

25.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
26.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
27.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
28.	Կատարման չափանիշներ	1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
29.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-5-11-001
30.	Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրագեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
31.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
32.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
33.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

		բավարար մակարդակի ապահովումն է:
34.	Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
35.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, 2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղ(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, 3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV) , 4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, 5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
36.	Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
37.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, 2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը, 3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, 4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ, 5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
38.	Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
39.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, 2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, 3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման, 4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, 5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:
40.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
41.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը

		<p>աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակալացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</p> <p>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»		
42.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-11-001
43.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի , գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
44.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
45.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
46.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
47.	Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
48.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին</p> <p>2)տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն)</p> <p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print)</p>

49.	Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
50.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն,
51.	Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
52.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն) 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ
53.	Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարագրում
54.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
55.	Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
56.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը

57.	Ուսումնառության արդյունք 6	Համացանցում աշխատելու իմացություն
58.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ)

Հաստատված է

ՀՀ կրթության և գիտության նախարարի
2012թ. մարտի 22-ի N 204-Ն հրամանով

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 3114 «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ»		
59.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 05-11-001
60.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել գծագրության և նախագծային առաջադրանքներ կատարելու՝ մասնագիտական մոդուլների ուսումնառության համար անհրաժեշտ կարողություններ:
61.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
62.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
63.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
64.	Ուսումնառության արդյունք 1	Կատարել տիպային դետալների էսքիզներ և բանվորական գծագրեր
65.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները հարթության վրա՝ կորերի լծորդում, փոխուղղահայաց ուղիղների կառուցում, եռանկյունների կառուցում կոորդինատներով, 2) ճիշտ է կատարում տիպային դետալների պրոյեկտումը հարթությունների վրա և պատկերում դրանց երեք պրոյեկցիաները, 3) ճիշտ է տալիս կտրվածքներ և պատկերում է առաջադրված տիպային դետալների աշխատանքային գծագրերը և էսքիզները, 4) ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա տիպային դետալների չափերը, 5) ճիշտ է կառուցում տիպային դետալների տարածական (աքսոնոմետրական) պատկերները, 6) ճիշտ է կատարում տիպային դետալի բնօրինակից համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը:
66.	Ուսումնառության արդյունք 2	Կարդալ բանվորական գծագրերը և էսքիզները
67.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված չափերի թույլտվածքները և մաքրության դասերի նշանակումները, 2) ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները, 3) ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի և էսքիզի վրա ներկայացված տեխնիկական պայմանները, 4) ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի կամ էսքիզի վրա պատկերված երիթային ճեղքի, բազմաերիթի, ատամնանիվի, տարբեր նշանակության առվակների, երեսակների և նմանատիպ այլ տարրերի նշանակումները:

68.	Ուսումնառության արդյունք 3	Կարդալ հանգույցների ու մեքենամասերի հավաքական գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը
69.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերում առանձին դետալների դիրքավորման նշանակումները,</p> <p>2) ճիշտ է բացատրում հավաքական գծագրում պայմանական նշանակումները՝ երիթային, բազմաերիթային միացություններ, ատամնանիվային կառույց, առանցքակալային նստեցվածք, եռակցման միացություն և նմանատիպ այլ նշանակումներ,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքների պայմանական նշանները,</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, և կարողանում գծագրերի փաթեթից, օգտվելով հավաքական գծագրից ընտրել համապատասխան դետալի բանվորական գծագիրը,</p> <p>5) ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի տեխնիկական պահանջները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ»		
70.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-002
71.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների, էլեկտրասարքավորումների կառուցվածքի, նշանակության և աշխատանքի սկզբունքի վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
72.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
73.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ԱՀ-ԱԱՕ-5-11-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» և ԳՄՇՆ 05-11-001 «Գծագրություն» մոդուլները:
74.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
75.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաստատուն էլեկտրական հոսանքի օրենքները և դրանց կիրառությունները
76.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում էլեկտրական դաշտը, էլեկտրական դաշտի լարվածությունն ու պոտենցիալների տարբերությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հաղորդիչների էլեկտրաունակությունը, կոնդենսատորները, դրանց միացման եղանակները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի օրենքները և հաղորդիչների միացման եղանակները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում մարտկոցների, էլեկտրաջեռուցիչ սարքերի, ջերմային ռելեի ապահովիչների կառուցվածքը:</p>

77.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել եռաֆազ հոսանքի շղթաների տեսակները
78.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում եռաֆազ փոփոխական հոսանքի ստացումը, 2) ճիշտ է ներկայացնում աստղաձև և եռանկյունաձև միացումները, 3) ճիշտ է ներկայացնում եռաֆազ տրանսֆորմատորի կառուցվածքն ու աշխատանքը:
79.	Ուսումնառության արդյունք 3	Գատարել էլեկտրական չափումներ
80.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էլեկտրաչափման տեխնիկան, նրա նշանակությունը և դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում էլեկտրաչափիչ սարքերի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 3) ճիշտ է կատարում դիմադրության, լարման, հոսանքի ուժի, հաճախության, հզորության չափումներ ռեոստատով, վոլտմետրով, ամպերմետրով, հաճախաչափով, վատտմետրով:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ»		
81.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 05-11-003
82.	Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողի մոտ ձևավորել ստատիկայի, կինեմատիկայի, նյութերի դիմադրության հաշվարկային մեթոդների և մեքենաների ու մեխանիզմների հիմնական տեսակների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
83.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
84.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ԳՄՇՆ 05-11-001 «Գծագրություն» մոդուլը:
85.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
86.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ստատիկայի հիմունքները
87.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ստատիկայի աքսիոմները. 2) ճիշտ է ներկայացնում հարթ և տարածական ուժահամակարգերի հավասարակշռության պայմանները. 3) ճիշտ է ներկայացնում հենարանային ամրացումների տեսակները և որոշում է հակազդումները հեծանի հարթ ծուխի դեպքում. 4) ճիշտ է ներկայացնում ձողային համակարգերի (ֆերմաների) տեսակները և որոշում ձողերում. լարումները և համակարգի հենարանային հակազդումները:
88.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կինեմատիկայի հիմունքները
89.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կինեմատիկայի հիմնական հասկացությունները.

		2) ճիշտ է ներկայացնում կետի կինեմատիկայի հիմնական հավասարումները. 3)ճիշտ է ներկայացնում պինդ մարմնի կինեմատիկայի հիմնական հավասարումները:
90.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մեխանիզմի օղակների վրա ազդող ուժերը
91.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում մեխանիզմի օղակների վրա ազդող ուժերը, 2) կարողանում է որոշել շարժիչ, օգտակար դիմադրող, ծանրության և իներցիայի ուժերը:
92.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել նյութերի դիմադրության հաշվարկային մեթոդները
93.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում դեֆորմացիայի տեսակները և հեծանի կտրվածքի երկրաչափական պարամետրերը. 2) ճիշտ է ներկայացնում հեծանի կտրվածքի չափերի որոշման եղանակները ձգման-սեղման, ծոման և ոլորման ժամանակ:
94.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել մեքենաների և մեխանիզմների հիմնական տեսակները
95.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մեխանիկական փոխանցումների հիմնական տեսակները և դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում ատամնանիվային փոխանցումների տեսակները, հիմնական տարրերը և երկրաչափական պարամետրերը. 3) ճիշտ է ներկայացնում փոկային և շղթայական փոխանցումների տեսակները, հիմնական տարրերը և երկրաչափական պարամետրերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»		
96.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-004
97.	Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողի մոտ ձևավորել մետաղական և ոչ մետաղական նյութերի կառուցվածքի, հատկությունների, ինչպես նաև մետաղների համաձուլվածքների կառուցվածքի վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
98.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
99.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
100.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
101.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մետաղների ֆիզիկաքիմիական հատկությունները
102.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մետաղների քիմիական հատկությունները՝ թթվակայունությունը, հրակայունությունը և օքսիդացումը,

		2) ճիշտ է ներկայացնում մետաղների ֆիզիկական հատկությունները՝ տեսակարար կշիռը, հալունակությունը, էլեկտրահաղորդականությունը և մագնիսական հատկությունները, 3) ճիշտ է ներկայացնում մետաղների մեխանիկական հատկությունները՝ կոշտությունը, ամրությունը, պլաստիկությունը, դիմացկունությունը, մածուցիկությունը և կարծրությունը:
103.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մետաղների և համաձուլվածքների ներքին կառուցվածքը, ֆիզիկական և քիմիական հատկությունները
104.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մաքուր մետաղների կառուցվածքը, 2) ճիշտ է ներկայացնում համաձուլվածքների ներքին կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում մետաղների ֆիզիկական և քիմիական հատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում երկաթ-ածխածնային համաձուլվածքների կառուցվածքը և տեսակները:
105.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մետաղների կոռոզիայի երևույթը և դրա տեսակները
106.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մետաղների քիմիական և էլեկտրաքիմիական կոռոզիայի երևույթը, 2) ճիշտ է ներկայացնում կոռոզիայի առաջացման պայմանները և տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում մետաղների կոռոզիայից պաշտպանելու եղանակները:
107.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մետաղների եռակցման սկզբունքները
108.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մետաղների՝ աղեղային և կոնտակտային, հաստատուն և փոփոխական հոսանքներով էլեկտրական եռակցման սկզբունքները, 2) ճիշտ է ներկայացնում մետաղների գազային եռակցման սկզբունքները, 3) ճիշտ է ներկայացնում եռակցման սարքավորումների աշխատանքի սկզբունքները:
109.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել հիմնական պոլիմերային նյութերի կառուցվածքը և դրանց կիրառությունը
110.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պոլիմերների կառուցվածքը և դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում պլաստմասսաների հիմնական տեսակները՝ շերտավոր ջերմառեակտիվ և ջերմապլաստիկ, 3) ճիշտ է ներկայացնում պոլիմերային նյութերի կիրառման դերն ու նշանակությունը:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԵՐՄԱՏԵԽՆԻԿԱ»		
111.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-005
112.	Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողի մոտ ձևավորել տեխնիկական ջերմատեխնիկայի, ջերմային պրոցեսների, կաթսաների և կոմպրեսորների կիրառության և դրանցում ընթացող ջերմային պրոցեսների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:

113.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
114.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
115.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
116.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ներքին այրման շարժիչների աշխատանքային ցիկլերը
117.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ներքին այրման շարժիչների աշխատանքի իդեալական ցիկլը, 2) ճիշտ է ներկայացնում ներքին այրման շարժիչների աշխատանքի իրական ցիկլերը՝ դիզելի և օտոյի ցիկլեր:
118.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել կոմպրեսորների և կոմպրեսորային կայանքների տեսակները
119.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կոմպրեսորների և կոմպրեսորային կայանքների կառուցվածքը և դրանցում ընթացող ջերմային գործընթացները, 2) ճիշտ է ներկայացնում ջերմահաղորդականության և ջերմափոխանակման գործընթացները:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՐԱՎԼԻԿԱ»

120.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-006
121.	Մոդուլի նպատակը	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում սովորողի մոտ ձևավորել հեղուկների շարժման ու հավասարակշռության օրենքների, հիդրոհաղորդականների և դրանց առանձին տարրերի կառուցվածքի ու աշխատանքի սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
122.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
123.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
124.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
125.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հիդրավլիկայի հիմնական հասկացությունները և սահմանումները
126.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գազերի և հեղուկների ֆիզիկական հատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում հեղուկների ստատիկայի հավասարումները, 3) ճիշտ է ներկայացնում հեղուկների շարժման հիմնական հավասարումը, 4) ճիշտ է ներկայացնում հեղուկի լամինանտ և տուրբուլենտ շարժումների առանձնահատկությունները և դրանց հիմնական ստատիկ բնութագրերը, 5) ճիշտ է ներկայացնում հեղուկի ճնշման կորուստները շարժման տարբեր պայմանների համար:

127.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հիդրավլիկ և պնևմատիկ հաղորդակների հիմնական կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները
128.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաներում և սարքավորումներում կիրառվող հիմնական հիդրավլիկ և պնևմատիկ հաղորդակների կառուցվածքը և դրանց տարրերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում պոմպերի տեսակները (ատամնանիվային, կենտրոնախույս, մխոցային), կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում ուժային գլանների տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում քամիչների տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում հեղուկի ճնշման կարգավորիչների տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում հաղորդակներում կիրառվող խողովակաշարերի և դրանց միացման տարրերի տեսակները:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԶՄՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ ԵՎ ԶԱՓՄԱՆ ՏԵԽՆԻԿԱ»		
129.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-007
130.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ ընդհանուր գիտելիքներ մեքենամասերի մակերևույթների մշակման ճշտության, մաքրության ու որակի, մեքենամասի նոմինալ, սահմանային և իրական չափերի, թույլտվածքների և նստեցվածքների, ճշտության դասերի, հիմնական չափագիտական հասկացությունների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել մեքենաշինության մեջ օգտագործվող հիմնական չափիչ գործիքներով չափումներ կատարելու կարողություններ:
131.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
132.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ԳՄՇՆ 5-11-001 «Գծագրություն» մոդուլը:
133.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
134.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մեքենամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգերը
135.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները,</p> <p>2) ճիշտ է բացատրում մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները,</p> <p>3) ճիշտ է պարզաբանում մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը,</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում մեքենամասի նոմինալ, սահմանային և իրական չափերը</p>

		5) ճիշտ է սահմանում թույլտվածք և նստեցվածք հասկացությունները, չափերի շեղումները (վերին, ներքին և իրական) և բացատրում բացակ ու ձգվածք հասկացությունները:
136.	Ուսումնառության արդյունք 2	Օգտվել թույլտվածքների աղյուսակներից
137.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում թույլտվածքների համակարգը և սահմանում վերջինիս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները, 2) ճիշտ է թվարկում թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները (կվալիտետները), 3) ճիշտ է օգտվում թույլտվածքների աղյուսակներից, 4) ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի՝ ճիշտ է հաշվարկում լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը կամ ձգվածքը:
138.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել չափումներ՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով
139.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում չափման իմաստը և սահմանում օգտագործվող ժամանակակից չափման միավորները, 2) ճիշտ է մեկնաբանում գոյություն ունեցող չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները, 3) ճիշտ է բացատրում ձողակարկիին կառուցվածքը և դրանով իրականացնում հանձնարարված չափումները, 4) ճիշտ է օգտվում միկրոմետրից և չափաձողից, մեկնաբանում վերջիններիս չափելու ճշտությունը, 5) ճիշտ է օգտվում ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՅՈՒՂԱՆՅՈՒԹԵՐ»		
140.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-008
141.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ներքին այրման շարժիչների համար օգտագործվող վառելանյութերի, տրակտորների և կոմբայնների մեխանիզմների յուղման համար օգտագործվող յուղանյութերի, վառելանյութերի և քսայուղերի մակնիշավորման սկզբունքների մասին, ինչպես նաև ձևավորել վառելանյութերը և քսայուղերը ճանաչելու կարողություն:
142.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
143.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
144.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

145.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերել ներքին այրման շարժիչների համար օգտագործվող վառելանյութերը, իմանալ դրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները
146.	Կատարման չափանիշներ	1) տարբերում է կարբյուրատորային և դիզելային շարժիչների համար օգտագործվող վառելիքը, 2) ճիշտ է ընթերցում և մեկնաբանում վառելիքների մակնիշները, 3) ճիշտ է շարադրում վառելիքի հետ աշխատելիս անվտանգության կանոնները:
147.	Ուսումնառության արդյունք 2	Տարբերել տրակտորների և կոմբայնների մեխանիզմների յուղման համար օգտագործվող յուղանյութերը, ներկայացնել դրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները
148.	Կատարման չափանիշներ	1) տարբերում է տրակտորների և կոմբայնների մեխանիզմների յուղման համար օգտագործվող յուղանյութերը: 2) ճիշտ է ընթերցում և մեկնաբանում յուղանյութերի մակնիշները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»		
149.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-010
150.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ ընդհանուր գիտելիքներ կենսագործունեության անվտանգության, «մարդ-մեքենա-միջավայր» համակարգի, վտանգավոր և վնասակար արտադրական գործոնների բնութագրերի և առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծման, կենսագործունեության անվտանգությանը վերաբերվող նորմատիվային իրավական ակտերի, ծառայության կառուցվածքի, աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի նորմերի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել դրանց չափման և հսկման կարողություններ:
151.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
152.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ԱՀ-ԱԱՕ-5-11-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
153.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
154.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ հնարավոր վնասվածքների տեսակները
155.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ կանխատեսվող հնարավոր վնասվածքները և դրանց պատճառները, մասնավորապես՝ - էլեկտրահարումներ, - տեսողության և մաշկի բաց մասերի վնասվածք քիմիական նյութերից, էլեկտրական աղեղի ճառագայթումից, - այրվածքներ հալած մետաղի և խարամի կաթիլներից,

		<p>- օրգանիզմի թունավորում աշխատանքների ընթացքում առաջացած վնասակար գազերից,</p> <p>2) նորոգման և վերականգնման աշխատանքներ իրականացնելիս ճիշտ է օգտվում անհատական պաշտպանիչ միջոցներից և արտահագուստից,</p> <p>3) ճիշտ է կատարում բանվորների (արհեստավորների) հրահանգավորումը աշխատանքի անվտանգության և առողջության պահպանության վերաբերյալ:</p>
156.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնելու համար կիրառվող սարքերի և սարքավորումների աշխատանքի անվտանգության կանոնները, կատարել հողանցման, փոխադրասարքերից, հակահրդեհային պարզագույն միջոցներից օգտվելու գործողություններ
157.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնելիս աշխատատեղը մաքուր է պահելու, սարքավորումներն ու մեխանիզմները հուսալի է միացնելու կանոնները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնելիս էլեկտրասարքավորումները տեղադրելու, դրանք խոնավությունից և ջրից պաշտպանելու, մեխանիկական ազդեցություններից մեկուսացնելու կանոնները,</p> <p>3) կարողանում է կատարել նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ կիրառվող էլեկտրասարքավորումների հողանցումը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման աշխատանքը սկսելուց առաջ օգտագործվող էլեկտրական հաղորդալարերի սարքին և մեկուսացված վիճակում լինելու պահանջները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում նորոգման և վերականգնման ժամանակ կիրառվող ծակող և կտրող գործիքներից օգտվելու կարգը,</p> <p>6) նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ ճիշտ է օգտվում սայլակներից կամ հատուկ ամրակներից՝ ազդեցությունները կամ հանգույցները տեղափոխելու համար,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում հակահրդեհային անվտանգության կանոնները և ցուցադրում հրդեհի մարման պարզագույն միջոցների (կրակմարիչ, բահ, թաղիքե ծածկեր, ավազի պարկեր) կիրառման գործողությունները:</p>
158.	Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ կիրառել նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ առաջացած վնասակար նյութերից, գազերից, ճառագայթումից և այրվածքներից պաշտպանվելու միջոցները
159.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է որոշում սահմանափակ տարածքներում աշխատանքներ կատարելիս հարկադրաբար արված օդափոխության բավարար աստիճանը, համոզվում է, որ հերթապահ դիտորդը ներկա է,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում պաշտպանական միջոցների՝ վահանակի, դիմակի, պաշտպանիչ ակնոցի ու լուսազտիչի,</p>

		սաղավարտի, հատուկ արտահագուստի և ձեռնոցների օգտագործման կարգը և ցուցադրում այն, 3) ճիշտ է կատարում բանվորների (արհեստավորների) հրահանգավորումը անհատական պաշտպանության միջոցներից օգտվելու վերաբերյալ:
160.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել կենսագործունեության անվտանգության բնագավառին վերաբերվող նորմատիվ իրավական փաստաթղթերը, հիմնական օրենսդրական ակտերը և համապատասխան ծառայության կառուցվածքը
161.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահպանության վերաբերյալ ՀՀ-ում գործող նորմատիվային իրավական ակտերի պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման ժամանակ գործող աշխատանքի անվտանգության կանոնները և այլ նորմատիվային իրավական ակտերի պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների սպասարկման ժամանակ գործող աշխատանքի անվտանգության կանոնները և այլ նորմատիվային իրավական ակտերի պահանջները, 4) ճիշտ է ներկայացնում կազմակերպության աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահպանության ստորաբաժանման կառուցվածքը՝ կախված կազմակերպության իրավական-կազմակերպական տեսակից և աշխատողների կազմից:
162.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել աշխատատեղերի օդերևութաբանական և միկրոկլիմայական պարամետրերի չափման և հսկման միջոցներն ու եղանակները, կատարել համապատասխան չափումներ
163.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում աշխատատեղերի օդերևութաբանական պարամետրերի չափման և հսկման միջոցներն ու եղանակները, կատարում համապատասխան չափումներ, 2) ճիշտ է ներկայացնում աշխատատեղերի միկրոկլիմայի պարամետրերի չափման և հսկման միջոցներն ու եղանակները և կատարում համապատասխան չափումներ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»		
164.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 05-11-011
165.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հողի կազմի և հատկությունների, հողի մշակման համակարգերի, աղուտ, ճահճային, քարքարոտ հողերի մելիորացիայի, պարարտանյութերի տեսակների, ցանքաշրջանառությունների, երկրագործության հիմնական համակարգերի և էրոզիայի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել գյուղատնտեսական մշակաբույսերը ճանաչելու, հողի մեխանիկական կազմը որոշելու, պարարտացման նորմերը հաշվարկելու

		կարողություններ:
166.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
167.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
168.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
169.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և որոշել դրա մեխանիկական կազմը
170.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողի կազմը, հատկությունները, հողի պրոֆիլի ձևավորումը և ձևաբանական հատկանիշները, 2) ճիշտ է որոշում հողի մեխանիկական կազմը:
171.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի անհրաժեշտ գործոնները, պայմանները և երկրագործության մեջ նրանց կանոնավորման մեթոդները
172.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում երկրագործության օրենքները, 2) ճիշտ է ներկայացնում ագրոտեխնիկական, գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանները և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները:
173.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մոլախոտերի դասակարգումը, հաշվառման մեթոդները և դրանց դեմ պայքարի միջոցառումները
174.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դասակարգումը և հաշվառման մեթոդները, 2) ճանաչում է մոլախոտերը արտաքին տեսքով, 3) ճիշտ է ներկայացնում մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների ագրոտեխնիկական և քիմիական մեթոդները և դրանց գույակցումը:
175.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել պարարտանյութերի դասակարգումը, կիրառումը և հաշվարկել դրանց օգտագործման նորմերը
176.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պարարտանյութերի դասակարգումը, տեսակները և դրանց կիրառման բնագավառներն ու եղանակները, 2) ճիշտ է հաշվարկում պարարտանյութերի օգտագործման նորմերը:
177.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել մշակաբույսերի առանձնահատկություններից բխող հողի մեխանիկական մշակման հիմնական տեխնոլոգիական գործընթացները, դրանց կատարման տեխնիկան
178.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողի մեխանիկական մշակման հիմնական տեխնոլոգիական գործընթացները և դրանց կատարման տեխնիկան, 2) ճիշտ է ներկայացնում մշակաբույսերի առանձնահատկություններից կախված՝ հողի մշակման տեխնոլոգիական

		գործընթացների առանձնահատկությունները:
179.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել գյուղատնտեսական գոտու ցանքաշրջանառությունները, ժամանակակից երկրագործության համակարգերը և դրա բաղկացուցիչ մասերը
180.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ցանքաշրջանառությունները և երկրագործության համակարգերը՝ ըստ գյուղատնտեսական գոտիների, 2) ճիշտ է ներկայացնում ժամանակակից երկրագործության համակարգերի բաղկացուցիչ մասերը:
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲՈՒՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ»		
181.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 05-11-012
182.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկայի, շրջանացված սորտերի, դրանց կենսաբանական և մշակության առանձնահատկությունների, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջների, կարևորագույն բանջարանոցային բույսերի կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել այդ մշակաբույսերը ճանաչելու կարողություններ:
183.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
184.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
185.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
186.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման ագրոտեխնիկան, շրջանացված սորտերի և նրանց կենսաբանական և մշակության առանձնահատկությունները
187.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման ագրոտեխնիկան, 2) ճիշտ է ներկայացնում շրջանացված սորտերի և նրանց կենսաբանական և մշակության առանձնահատկությունները:
188.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գյուղատնտեսական մեքենաների և գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջները և գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության առանձնահատկությունները
189.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մշակաբույսերի մշակման մեքենաների և գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության առանձնահատկությունները:

190.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել կարևորագույն բանջարանոցային բույսերի կենսաբանական առանձնահատկությունները և ճանաչել գյուղատնտեսական մշակաբույսերը՝ ըստ դրանց սերմերի, ծիլերի և պտուղների
191.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է շարադրում կարևորագույն բանջարանոցային բույսերի կենսաբանական առանձնահատկությունները, 2) ճանաչում է գյուղատնտեսական մշակաբույսերը՝ ըստ դրանց սերմերի, ծիլերի և պտուղների:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		
192.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-013
193.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ անասնաբուծության նշանակության և վարման համակարգի, գյուղատնտեսական կենդանիների ծագման, ցեղերի աճի ու զարգացման օրինաչափությունների, մթերատվության վրա ազդող գործոնների, բուծման մեթոդների, կերակրման հիմունքների, կերերի պատրաստման պահանջների, անասնաբուծության հիմնական ճյուղերի վարման առանձնահատկությունների, մթերքի և հումքի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիների և կենդանիների պահվածքի տեխնոլոգիական լուծումների ու սանիտարահիգիենիկ պահանջների վերաբերյալ:
194.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
195.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
196.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
197.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել անասնաբուծության վարման համակարգը, կենդանիների ծագման, ցեղերի աճի ու զարգացման օրինաչափությունները
198.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անասնաբուծության վարման համակարգը, 2) ճիշտ է ներկայացնում կենդանիների ծագման, ցեղերի աճի ու զարգացման օրինաչափությունները:
199.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել մթերատվության վրա ազդող գործոնները, կերակրման հիմունքները, կերերի պատրաստման պահանջները
200.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մթերատվության վրա ազդող գործոնները, 2) ճիշտ է ներկայացնում կենդանիների կերակրման հիմունքները և կերերի պատրաստման պահանջները:

201.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել անասնաբուծության հիմնական ճյուղերի վարման առանձնահատկությունները, մթերքի և հումքի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները և կենդանիների պահվածքի տեխնոլոգիական լուծումներն ու սանիտարահիգիենիկ պահանջները
202.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անասնաբուծության հիմնական ճյուղերի վարման առանձնահատկությունները, մթերքի և հումքի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիները, 2) առաջարկում է կենդանիների պահվածքից բխող տեխնոլոգիական ճիշտ լուծումներ, 3) ճիշտ է ներկայացնում կենդանիների խնամքի սանիտարահիգիենիկ պահանջները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»		
203.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-014
204.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլների և տրակտորների, ավտոտրակտորային շարժիչների դասակարգման և ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի սկզբունքի, շարժիչների հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ, ինչպես նաև շարժիչը գործարկելու կարողություններ:
205.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
206.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի 5-11-002 «Ընդհանուր էլեկտրատեխնիկա», 5-11-003 «Կիրառական մեխանիկա», ԳՄՇՆ 5-11-004 «Նյութագիտություն», 5-11-005 «Ընդհանուր հիդրավլիկա» և 5-11-006 «Ընդհանուր ջերմատեխնիկա» մոդուլները:
207.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
208.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը և դրանց հիմնական մասերի նշանակությունը:
209.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և տրակտորների դասակարգման սկզբունքները, 2) ճիշտ է տարբերակում տարբեր մակնիշների ավտոմոբիլները, տրակտորները և ինքնագնաց շասսիները, 3) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և ինքնագնաց շասսիների ընդհանուր կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և տրակտորների հիմնական մասերի նշանակությունը:
210.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ավտոմոբիլային, տրակտորային և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների ներքին այրման շարժիչների տեսակները, աշխատանքի սկզբունքները, կառուցվածքային առանձնահատկությունները
211.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ներքին այրման շարժիչների դասակարգումը, դրանց ընդհանուր կառուցվածքը, շարժիչը

		բնութագրող ցուցանիշների հիմնական մեծություններն ու հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում կարբյուրատորային, դիզելային և վառելանյութի ներարկումով շարժիչների աշխատանքի առանձնահատկությունները, դրանց համեմատական գնահատականը, 3) ճիշտ է ներկայացնում դիզելային և կարբյուրատորային շարժիչների աշխատանքային ցիկլերը:
212.	Ուսումնառության արդյունք 3	Գործարկել շարժիչը
213.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է գործարկում դիզելային շարժիչը, 2) ճիշտ է շարադրում շարժիչի գործարկման ժամանակ անվտանգության տեխնիկայի պահանջները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՇԱՐՇԻՉՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ»		
214.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-015
215.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ տրակտորի շարժիչի հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել դրանք քանդելու, հավաքելու և կարգավորելու կարողություններ:
216.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
217.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» մոդուլը:
218.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
219.	Ուսումնառության արդյունք 1	Կատարել շարժիչի շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի քանդում, հավաքում և կարգավորում
220.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի շարժական և անշարժ մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը, աշխատանքը և ընդհանուր կառուցվածք, 2) ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը, 3) ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի շարժաթևային խումբը, 4) ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի ծնկաձև լիսեռը:
221.	Ուսումնառության արդյունք 2	Կատարել շարժիչի գազաբաշխիչ մեխանիզմի քանդում, հավաքում և կարգավորում
222.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում և բացատրում գազաբաշխիչ մեխանիզմի նշանակությունը տարատեսակները, աշխատանքը, 2) ճիշտ է բացատրում փականային գազաբաշխիչ մեխանիզմի մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է քանդում և հավաքում գազաբաշխիչ մեխանիզմը,

		<p>4) ճիշտ է կարգավորում բաշխիչ լիսեռի առանցքային տեղաշարժը, կափույրների բացակները և ճնշանվազման մեխանիզմը,</p> <p>5) ճիշտ է տեղադրում գազաբաշխիչ փոկանիվները (աստղանիվները) և ստուգում գազաբաշխման փուլերը:</p>
223.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել կարբյուրատորային, դիզելային և վառելիքի ներարկումով շարժիչների սնման համակարգերի աշխատանքի սկզբունքները և կառուցվածքային առանձնահատկությունները, կարգավորել այդ համակարգերը
224.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում սնման համակարգի նշանակությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում կարբյուրատորային, դիզելային և վառելիքի ներարկումով սնման համակարգերի աշխատանքի</p> <p>3) գրունքները և կառուցվածքային առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում սնման յուրաքանչյուր համակարգի հիմնական մասերի նշանակությունը և դրանց ընդհանուր կառուցվածքը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ավտոտրակտորային շարժիչների համար օգտագործվող վառելանյութերի դասակարգումը և նրանց հատկությունները,</p> <p>5) ճիշտ է ստուգում վառելիքի գոիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա,</p> <p>6) ճիշտ է կարգավորում կարբյուրատորը,</p> <p>7) ճիշտ է որոշում վառելիքի մատուցման մոմենտը,</p> <p>8) ճիշտ է ստուգում և կարգավորում բոցամուղները:</p>
225.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ավտոտրակտորային շարժիչների հովացման համակարգերի նշանակությունը, աշխատանքը և կառուցվածքը, կարգավորել այդ համակարգերը
226.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում հովացման համակարգի նշանակությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հեղուկային և օդային հովացման համակարգերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>3) ճիշտ է ստուգում ջրի պոմպի և օդափոխիչի տեխնիկական վիճակը, քանդում և հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա,</p> <p>4) ճիշտ է ստուգում հովացման համակարգի սարքերի տեխնիկական վիճակը:</p>
227.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ավտոտրակտորային շարժիչների յուղման համակարգերի նշանակությունը, աշխատանքը և կառուցվածքը, ստուգել այդ համակարգերը
228.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում յուղման համակարգի նշանակությունը,

		<p>2) ճիշտ է ներկայացնում մեքենամասերի յուղման առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում յուղման համակարգի յուրաքանչյուր մասի նշանակությունը, աշխատանքը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>4) ճիշտ է ստուգում յուղի պոմպի և յուղի գոխիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում տրակտորների համար օգտագործվող յուղերի և քսայուղերի դասակարգումը և նրանց հատկությունները:</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»		
229.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-016
230.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլի, տրակտորի և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների էլեկտրական սարքավորումների ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի, դրանց հիմնական խմբերի վերաբերյալ և ձևավորել դրանց շահագործման ընթացքում անսարքությունների բացահայտման և վերացման կարողություններ:
231.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
232.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» մոդուլը:
233.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
234.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ավտոտրակտորային շարժիչների վառոցքի համակարգի նշանակությունը, աշխատանքը և կառուցվածքը
235.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի նշանակությունը և աշխատանքը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի հիմնական մասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը:</p>
236.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների էլեկտրական սարքավորումների նշանակությունը, աշխատանքը, հիմնական կարգավորումները:
237.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների հիմնական խմբերը՝ հոսանքի աղբյուրներ, վառոցքի համակարգ, լուսավորման և լուսագդանշանային համակարգ, ներկայացնելով դրանց նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների աշխատանքի սկզբունքները,</p>

		3) ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների հիմնական կարգավորման սկզբունքները:
238.	Ուսումնառության արդյունք 3	Հանել և տեղադրել ավտոմոբիլի կամ տրակտորի գեներատորը, կարգավորել շարժափոկի ձգվածությունը
239.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գեներատորի կառուցվածքը և աշխատանքը, 2) ճիշտ է հանում և տեղադրում գեներատորը, 3) ճիշտ է կարգավորում շարժափոկի ձգվածությունը:
240.	Ուսումնառության արդյունք 4	Մտուցել և սպասարկել մարտկոցային կուտակիչները, կարգավորել վառոցքի մոմենտը, լուսավորման և լուսազդանշանային համակարգը
241.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է շարադրում մարտկոցային կուտակիչների սպասարկման կարգը, 2) ճիշտ է ստուգում մարտկոցային կուտակիչների տեխնիկական վիճակը հատուկ գործիքների օգնությամբ, 3) ճիշտ է շարադրում վառոցքի մոմենտի ազդեցությունը շարժիչի աշխատանքի վրա, 4) ճիշտ է կարգավորում վառոցքի մոմենտը, 5) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների լուսավորման և լուսազդանշանային համակարգի կառուցվածքը, 6) ճիշտ է կարգավորում ավտոմոբիլի, տրակտորի կամ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի լապտերի լույսը:
242.	Ուսումնառության արդյունք 5	Հայտնաբերել և պարզ եղանակներով վերացնել ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների էլեկտրասարքավորումների հիմնական անսարքությունները
243.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էլեկտրասարքավորումների հնարավոր հիմնական անսարքությունները, 2) հայտնաբերում է հոսանքի աղբյուրների հիմնական պարզագույն անսարքությունները, 3) հայտնաբերում է վառոցքի համակարգի հիմնական պարզագույն անսարքությունները, 4) հայտնաբերում է լուսավորման և լուսազդանշանային համակարգի հիմնական պարզ անսարքությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՆԵՐԸ»		
244.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-017
245.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլի, տրակտորի և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների նշանակության, կցորդման ազույցների և միջանկյալ միացումների, տարբեր մակնիշների ավտոմոբիլների և տրակտորների փոխանցումների տուփերի կառուցվածքի, տրակտորների հետևի կամրջակի վերաբերյալ և ձևավորել այդ մեխանիզմները շահագործելու ու խնամքն իրականացնելու կարողություններ:
246.	Մոդուլի տևողությունը	36 ժամ

247.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» մոդուլը:
248.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
249.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ավտոմոբիլների և տրակտորների տրանսմիսիաների տեսակները, կառուցվածքը, աշխատանքի առանձնահատկությունները
250.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների տրանսմիսիաների նշանակությունը, տեսակները և աշխատանքը, 2) ճիշտ է ներկայացնում տրակտորների տրանսմիսիաների նշանակությունը, տեսակները և աշխատանքը:
251.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ավտոմոբիլների և տրակտորների կցորդման ազույցների նշանակությունը, աշխատանքը, հիմնական կարգավորումները
252.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում կցորդման ազույցի (կցորդիչի) նշանակությունը և տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում կցորդման ազույցի (կցորդիչի) յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է բացատրում կցորդման ազույցի (կցորդիչի) հիմնական կարգավորումները:
253.	Ուսումնառության արդյունք 3	Հանել և տեղադրել ավտոմոբիլի կամ տրակտորի փոխանցումների փոփոխման և բաշխիչ տուփերը
254.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում փոխանցումների փոփոխման տուփի նշանակությունը և տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում աստիճանավոր և անաստիճան փոխանցման տուփերի հիմնական մեքենամասերի (մասերի) նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է բացատրում բաշխիչ տուփի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, դրա առանձին մեքենամասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 4) ճիշտ է հանում և տեղադրում ավտոմոբիլի կամ տրակտորի փոխանցումների փոփոխման կամ բաշխիչ տուփերը:
255.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ավտոմոբիլի և տրակտորի տանող կամրջակի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, առջևի տանող և ղեկավարվող անիվների հաղորդակների կառուցվածքային առանձնահատկությունները
256.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում տանող կամրջակի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 2) ճիշտ է ներկայացնում տանող կամրջակի յուրաքանչյուր մասի (մեքենամասի) նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է բացատրում առջևի տանող և ղեկավարվող անիվների հաղորդակների կառուցվածքային առանձնահատկոթ-

		յունները, 4) ճիշտ է ներկայացնում հավասար և անհավասար անկյունային արագության կարդանային փոխանցումների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը:
257.	Ուսումնառության արդյունք 5	Ստուգել և իրականացնել ավտոմոբիլի կամ տրակտորի տրանսմիսիայի առանձին հանգույցների խնամքը և կարգավորումները
258.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների տեխնիկական սպասարկման աշխատանքները, 2) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները, 3) հայտնաբերում և պարզ եղանակներով վերացնում է ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տրանսմիսիաների հիմնական անսարքությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԱՅԻՆ ՄԱՍԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ»		
259.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-018
260.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլների, թրթուրավոր և անիվավոր տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների ընթացքային մասի և ղեկավարման մեխանիզմների, արգելակման համակարգերի նշանակության, կառուցվածքի ու աշխատանքի վերաբերյալ և ձևավորել այդ մեխանիզմները շահագործելու, դրանց կարգավորման ու խնամքն իրականացնելու կարողություններ:
261.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
262.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» և ԳՄՇՆ 5-11-017 «Ավտոմոբիլների և տրակտորների տրանսմիսիաները մոդուլները:
263.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
264.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների կախոցների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները
265.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում կախոցների նշանակությունը, տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում կախյալ կախոցի ընդհանուր կառուցվածքը և թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,

		<p>3) ճիշտ է ներկայացնում անկախ կախոցի ընդհանուր կառուցվածքը և թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում կախոցի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում կախոցի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:</p>
266.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների անիվների և դողերի կառուցվածքային առանձնահատկությունները և կատարել դրանց խնամքն ու հիմնական կարգավորումները
267.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում անիվների և դողերի կառուցվածքը և թվարկում մեքենամասերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում անիվների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում անիվների և դողերի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլի շահագործման ընթացքում անիվների և դողերի հիմնական անսարքությունները և կատարում համապատասխան կարգավորումները:</p>
268.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել թրթուրավոր տրակտորների ընթացքային մասի կառուցվածքը և կատարել դրանց հիմնական կարգավորումները
269.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում թրթուրավոր տրակտորների կառուցվածքը և թվարկում մեքենամասերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում թրթուրավոր շարժասարքի յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում թրթուրավոր շարժասարքի տեխնիկական սպասարկման աշխատանքները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորի շահագործման ընթացքում թրթուրավոր շարժասարքի հիմնական անսարքությունները և կատարում համապատասխան կարգավորումները:</p>
270.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների դեկային վարման տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները
271.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների դեկային վարման նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների դեկային մեխանիզմի նշանակությունը, տեսակները, թվարկում հիմնական մեքենամասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում ավտոմոբիլների և անիվավոր տրակտորների դեկային շարժաբերի նշանակությունը,</p>

		տեսակները, թվարկում հիմնական մեքենամասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում ղեկային վարման տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները, կատարում համապատասխան կարգավորումները:
272.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել թրթուրավոր տրակտորների շրջադարձի մեխանիզմների տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները
273.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում թրթուրավոր տրակտորների շրջադարձի մեխանիզմների նշանակությունը, տարատեսակները, համեմատական գնահատականը և դրանց աշխատանքի սկզբունքները, 2) ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորների շրջադարձային ագույցների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, թվարկում հիմնական մեքենամասերը և դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորների պլանետարային տիպի շրջադարձային մեխանիզմների նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, թվարկում հիմնական մեքենամասերը և դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը, 4) ճիշտ է ներկայացնում թրթուրավոր տրակտորների շրջադարձի մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները, կատարում համապատասխան կարգավորումները:
274.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ավտոմոբիլների, տրակտորների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների արգելակային համակարգերի նշանակությունը, տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները
275.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում արգելակային համակարգի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում արգելակային մեխանիզմի նշանակությունը, տեսակները, թմբուկային և սկավառակային արգելակային մեխանիզմների յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում արգելակային հաղորդակի տեսակները և կառուցվածքային առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում հիդրավլիկ արգելակային հաղորդակի հիմնական մասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,

		<p>5) ճիշտ է ներկայացնում պնևմատիկ արգելակային հաղորդակի հիմնական մասերի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում արգելակային համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները և աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները, կատարում համապատասխան կարգավորումները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՔԵՐԸ, ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԹԱՓՔԵՐԸ»		
276.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-019
277.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ թրթուրավոր և անիվավոր տրակտորների օժանդակ մեխանիզմների ու սարքերի, ավտոմոբիլների թափքերի նշանակության, կառուցվածքի ու աշխատանքի մասին և ձևավորել այդ մեխանիզմներն ու սարքերը շահագործելու, դրանց կարգավորման կարողություններ:
278.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
279.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը» և ԳՄՇՆ 5-11-017 «Ավտոմոբիլների և տրակտորների տրանսմիսիաները» մոդուլները:
280.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
281.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տրակտորների օժանդակ մեխանիզմների, հզորության անջատման լիսեռի և սարքերի նշանակությունը, կառուցվածքն ու աշխատանքը և դրանց կարգավորումները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները
282.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում տրակտորների օժանդակ մեխանիզմների, հզորության անջատման լիսեռի և սարքերի նշանակությունը, կառուցվածքն ու աշխատանքը, թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում տրակտորների հզորության անջատման լիսեռի և սարքերի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները և իրականացնում դրանց հիմնական կարգավորումները:</p>
283.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել տրակտորների հիդրավլիկ կախման համակարգի նշանակությունը, կառուցվածքը, կատարել դրանց խնամքն ու հիմնական կարգավորումները
284.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում տրակտորների հիդրավլիկ կախման համակարգի նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքը, թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>2) ճիշտ է իրականացնում տրակտորների հիդրավլիկ կախման մեխանիզմի խնամքն ու կարգավորումները,</p>

		3) ճիշտ է ներկայացնում տրակտորների հիդրավլիկ կախման համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող հիմնական անսարքությունները:
285.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ավտոմոբիլների թափքերի տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, տեխնիկական սպասարկման աշխատանքները, հիմնական անսարքությունները:
286.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում թափքերի նշանակությունը, տեսակները և ընդհանուր կառուցվածքը, 2) ճիշտ է ներկայացնում շրջանակի և թափքի հիմնական մասերից յուրաքանչյուր նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում թափքերի տեխնիկական սպասարկման աշխատանքները, 4) ճիշտ է ներկայացնում թափքերի հիմնական անսարքությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»		
287.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-020
288.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հողամշակման մեքենաների կառուցվածքի, աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսի մասին և ձևավորել դրանք աշխատանքին նախապատրաստելու, դաշտում կարգավորելու, աշխատանքի ընթացքում վարելու, տեխնիկական սպասարկում և պահպանում իրականացնելու կարողություններ:
289.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
290.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 5-11-011 «Ընդհանուր երկրագործություն», ԳՄՇՆ 5-11-012 «Բուսաբուծություն և բանջարաբուծություն» մոդուլները:
291.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
292.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գույքանների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և կարգավորումները
293.	Գատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գույքանների դասակարգումը, տեսակները, կառուցվածքն ու աշխատանքը, թվարկում հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը, 2) ճիշտ է նախապատրաստում գույքանը աշխատանքի համար, 3) ճիշտ է իրականացնում գույքանների կարգավորումները:

294.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հողի մակերեսային մշակման մեքենաների դասակարգումը, կառուցվածքները, աշխատանքը, անվտանգության կանոնները և կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և կարգավորումները
295.	Կատարման չափանիշներ	<p>1) Ճիշտ է ներկայացնում հողի մակերեսային մշակման մեքենաների դասակարգումը, կառուցվածքները, աշխատանքը և կառուցվածքային առանձնահատկությունները, թվարկում դրանց հիմնական մասերը, յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը,</p> <p>2) Ճիշտ է նախապատրաստում ցաքանները և կուլտիվատորները աշխատանքի համար,</p> <p>3) Ճիշտ է իրականացնում ցաքանների և կուլտիվատորների կարգավորումները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՑԱՆԻՉ, ՏՆԿԻՉ, ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ԲՈՒՑՄԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»		
296.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-021
297.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ցանիչ, տնկիչ, պարարտացման և բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների կառուցվածքի, աշխատանքների տեխնոլոգիական պրոցեսների մասին և ձևավորել դրանք աշխատանքին նախապատրաստելու, դաշտում կարգավորելու կարողություններ:
298.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
299.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 5-11-011 «Ընդհանուր երկրագործություն», ԳՄՇՆ 5-11-012 «Բուսաբուծություն և բանջարաբուծություն»:
300.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

301.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հատիկաշարքային ցանիչների և տնկիչների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումն աշխատանքի համար և իրականացնել հիմնական կարգավորումները
302.	Գատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ճիշտ է ներկայացնում հատիկաշարքային ցանիչների և տնկիչների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) Ճիշտ է ներկայացնում հատիկաշարքային ցանիչների և տնկիչների հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը, 3) Ճիշտ է նախապատրաստում և կարգավորում ցանիչը աշխատանքի համար, 4) Ճիշտ է նախապատրաստում և կարգավորում տնկիչը աշխատանքի համար:
303.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել պարարտացման և սնուցման մեքենաների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումն աշխատանքի համար և իրականացնել հիմնական կարգավորումները
304.	Գատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ճիշտ է ներկայացնում պարարտացման մեքենաների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) Ճիշտ է ներկայացնում պարարտացման մեքենաների հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը, 3) Ճիշտ է նախապատրաստում և կարգավորում պարարտացման մեքենան աշխատանքի համար:
305.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
306.	Գատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ճիշտ է ներկայացնում բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) Ճիշտ է ներկայացնում բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների հիմնական մասերը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը, 3) Ճիշտ է նախապատրաստում և կարգավորում սրսկիչը աշխատանքի համար:
ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»		
307.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-022

308.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների կառուցվածքի, աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսի վերաբերյալ և ձևավորել դրանք աշխատանքին նախապատրաստելու, դաշտում կարգավորելու կարողություններ:
309.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
310.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 5-11-012 «Բուսաբուծություն և բանջարաբուծություն» ԳՄՇՆ 5-11-013 «Անասնաբուծության հիմունքներ» մոդուլները:
311.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
312.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հնձիչ մեքենաների, դրանց կտրող ապարատների դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
313.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների կտրող ապարատների դասակարգումը, կառուցվածքը, դրանցից յուրաքանչյուր մեքենամասի նշանակությունը և կառուցվածքը, անվտանգության կանոնները, 3) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում կտրող ապարատը աշխատանքի համար:
314.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել փոցիների, քարշանների, հավաքող մամլիչների, կապոցահավաքիչների տեսակները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
315.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում փոցիների և քարշանների նշանակությունը, դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) ճիշտ է ներկայացնում հավաքող մամլիչների նշանակությունը, դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 3) ճիշտ է ներկայացնում կապոցահավաքիչների նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 4) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հավաքիչ մամլիչը աշխատանքի համար,

		5) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում կապոցահավաքիչը աշխատանքի համար:
316.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հացահատիկահավաք կոմբայների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
317.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում հացահատիկահավաք կոմբայնի հնձիչի, դրա առանձին հանգույցների ու մասերի (կտրող ապարատ, վիլակ, շնեկ) նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հացահատիկահավաք կոմբայնի կալսիչի, դրա առանձին հանգույցների ու մասերի (ընդունող բիտեր, կալսիչ ապարատ, ծղոտացնիչ, բունկեր, բարդոցիչ) նշանակությունը, դասակարգումը, ագրոտեխնիկական պահանջները, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>3) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հացահատիկահավաք կոմբայնի հնձիչը աշխատանքի համար,</p> <p>4) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հացահատիկահավաք կոմբայնի կալսիչը աշխատանքի համար:</p>
318.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել եգիպտացորենահավաք կոմբայնների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
319.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում եգիպտացորենի բերքահավաքի ձևերը և ագրոտեխնիկական պահանջները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում եգիպտացորենահավաք կոմբայնի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>3) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում եգիպտացորենահավաք կոմբայնը աշխատանքի համար:</p>
320.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել կարտոֆիլահավաք մեքենաների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
321.	Գատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում կարտոֆիլի բերքահավաքի ձևերը և ագրոտեխնիկական պահանջները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում կարտոֆիլահանիչի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում կարտոֆիլահավաք կոմբայնի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները,</p> <p>4) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում կարտոֆիլահանիչը աշխատանքի համար:</p>

322.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ճակնդեղահավաք մեքենաների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները:
323.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում շաքարի ճակնդեղի բերքահավաքի ագրոտեխնիկական պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում արմատահատման տիպի ճակնդեղահավաք կոմբայնի, դրա առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 3) ճիշտ է ներկայացնում ճակնդեղի տերևուքի նախնական կտրմամբ ճակնդեղահավաք մեքենաների, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 4) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում արմատահատման տիպի ճակնդեղահավաք կոմբայնն աշխատանքի համար:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻՑ ՀԵՏՈ ՀԱՏԻԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»

324.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-023
325.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բերքահավաքից հետո հատիկի մշակման մեքենաների կառուցվածքի, աշխատանքի տեխնոլոգիական պրոցեսի մասին և ձևավորել այդ մեքենաները կարգավորելու և աշխատանքի նախապատրաստելու կարողություններ:
326.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
327.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 5-11-012 «Բուսաբուծություն և բանջարաբուծություն», ԳՄՇՆ 5-11-013 «Անասնաբուծության հիմունքները» մոդուլները:
328.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
329.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հատիկամաքրիչ և հատիկատեսակավորիչ մեքենաներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները, հատիկների մաքրման ու տեսակավորման սկզբունքները
330.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հատիկամաքրիչ և հատիկատեսակավորիչ մեքենաներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում բերքահավաքից հետո հատիկների մաքրման ու տեսակավորման սկզբունքները, 3) ճիշտ է շարադրում բերքահավաքից հետո հատիկի մշակման մեքենաների դասակարգումը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները:

331.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հատիկամաքրիչների տեսակները, կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
332.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հատիկամաքրիչ մեքենաների, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հատիկամաքրիչ մեքենաները աշխատանքի համար:
333.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հատիկատեսակավորիչ մեքենաների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումն աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները
334.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հատիկատեսակավորիչ մեքենաների, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հատիկատեսակավորիչ մեքենաները աշխատանքի համար:
335.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հատիկաչորանոցների կառուցվածքը, անվտանգության կանոնները, կատարել դրանց նախապատրաստումը աշխատանքի և իրականացնել հիմնական կարգավորումները:
336.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հատիկաչորանոցների տեսակները, կառուցվածքը, դրանց առանձին հանգույցների ու մասերի նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքը, անվտանգության կանոնները, 2) ճիշտ է նախապատրաստում և կարգավորում հատիկաչորանոցները աշխատանքի համար:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՔԵՆԱՏՐՄԿՏՈՐՍՅՒՆ ՊԱՐԿԻ ՇԱՀՍԳՈՐԾՈՒՄ»

337.	Մոդուլի դասիչը	ԳՄՇՆ 5-11-024
338.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) ռացիոնալ համալրման, ագրեգատի կազմի ճշտման, ՄՏԱ-ի շահագործական ցուցանիշների որոշման, գյուղատնտեսությունում տրանսպորտի դերի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ՄՏԱ արդյունավետ շահագործման կարողություններ:
339.	Մոդուլի տևողությունը	48 ժամ
340.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳՄՇՆ 5-11-014 «Ավտոմոբիլների և տրակտորների ընդհանուր կառուցվածքը», ԳՄՇՆ 5-11-020 «Հողամշակման մեքենաներ», ԳՄՇՆ 5-11-021 «Ցանիչ, տնկիչ, պարարտացման և բույսերի քիմիական պաշտպանության մեքենաներ», ԳՄՇՆ 5-11-022 «Բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաներ» մոդուլները:
341.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

342.	Ուսումնառության արդյունք 1	Համալրել USU և ճշտել ագրեգատի կազմը
343.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մեքենա-տրակտորային ագրեգատը և բացատրում դրա նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում և կատարում USU-ի համալրումը և ագրեգատի կազմի ճշտումը, 3) ճիշտ է որոշում USU-ի կազմը, 4) ճիշտ է նախապատրաստում ագրեգատը աշխատանքի, 5) ճիշտ է ներկայացնում ագրեգատի վրա գծանշիչները տեղադրումը և գծանշիչի թռիչքի որոշումը:
344.	Ուսումնառության արդյունք 2	Ընտրել USU-ի շարժման եղանակները և շրջադարձի ձևերը
345.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում USU-ի շարժման եղանակները և շրջադարձի ձևերը, 2) ճիշտ է որոշում ագրեգատի կինեմատիկական պարամետրերը, 3) ճիշտ է որոշում դաշտի շրջադարձային գոտու լայնությունը և ագրեգատի շրջադարձի երկարությունը, 4) ճիշտ է որոշում աշխատանքային տեղամասի օպտիմալ լայնությունը և ագրեգատի աշխատանքային ընթացքի գործակիցը, 5) ճիշտ է ներկայացնում, թե ինչով է պայմանավորված USU-ի շարժման ուղղության ընտրությունը:
